

Եպիսկոպոս, Տես քեզ աշխատանքի մեջ

Նյութ՝ Փրկության Աշխատանքը Արագացնելու համար



Որպես եպիսկոպոս դուք կրում եք ձեր ծխում փրկության աշխատանքի սուրբ քահանայության բանալիները: Աշխատելով ծխի խորհրդի, լիաժամկետ միսիոներների և ձեր ծխի անդամների հետ միասնության մեջ, դուք կարող եք գործածել այդ բանալիները և տեսնել, թե ինչպես է ուժեղանում ծուխը և աճում են անդամները՝ որպես անհատական աշակերտներ:

Տեսանյութեր



Անդամների միսիոներական աշխատանքը



Նոր և վերադարձող անդամի առաջընթացը

Հոդված

Նախագահ Հենրի Բ. Այրինգ, «Մենք մեկ ենք», 2013 ապրիլյան գերագույն համաժողով

Երեց Նիլ Լ. Անդերսեն, «Սա հրաշք է», 2013 ապրիլյան գերագույն համաժողով

Երեց Ռասսել Մ. Նելսոն, «Հարցրեք միսիոներներին», 2012 հոկտեմբերյան գերագույն համաժողով

Ի՞ՆՉՆ Է ՆՈՐ ԻՆՁ ՀԱՄԱՐ:

Հավանաբար, ձեր ծխում կլինեն թվով ավելի շատ լիաժամկետ միսիոներներ, և ձեր մասնակցությունը և ղեկավարումը էական են: Այդ աճը նշանակում է, որ դուք կարող եք արագացնել ձեր աշխատանքը.

- **Լինելով օրինակ**, գտնելով և պատրաստելով անհատներին և ընտանիքներին միսիոներների կողմից ուսուցանվելու համար:
- Օգնելով անդամներին և ղեկավարներին գտնել և **պատրաստել ընկերներին և հարևաններին**, հնարավորություն տալով միսիոներներին իրականացնել Հիսուս Քրիստոսի ավետարանն ուսուցանելու իրենց սուրբ պարտականությունը:
- Հետևելով, որ միսիոներները և անդամները դրական և պատշաճ շփումներ ունենան՝ **միանալով փրկության աշխատանքի մեջ**:
- **Ունենալով ծխի միսիայի նվիրված ղեկավար**, ով համակարգում է աշխատանքը ծխի խորհրդի, ծխի միսիոներների և ծխի անդամների հետ՝ լրացնելով միսիոներների օրերը ուսուցանման պայմանավորվածություններով:

ՈՐՏԵ՞Ղ ԵՄ ԿԱՐՈՂ ԵՄ ՍՈԿՈՐԵԼ ԻՄ ԴԵՐԸ:

Ձեր դերը չի կայանում աշխատանքը միայնակ անելու մեջ, այլ՝ առաջնորդելու ծուխը փրկության աշխատանքը կատարելիս: Լրացուցիչ տեղեկության համար տես.

- *Ձեռնարկ 2*, Գլուխ 5
- *Քարոզիչ Իմ Այնտադանը*, Գլուխ 13
- Հատուկ հեռարձակում. Փրկության աշխատանքը



Ո՞Վ ԿԱՐՈՂ Է ՕԳՆԵԼ:



- Ձեր **խորհրդականները** կարող են օգնել ձեզ առաջնահերթություն տալ այս աշխատանքին, ուսուցանելով վարդապետությունը և ավետարանով ուրախությամբ սպրելու օրինակ ծառայելով: Դուք կարող եք նշանակել խորհրդականներից մեկին համակարգելու ակտիվացման աշխատանքները, իսկ մյուսին՝ համակարգելու անդամներին պահելու աշխատանքները:
- Ձեր **ծխի խորհուրդը** կարող է օգնել, քննարկելով յուրաքանչյուր հետաքրքրվողի և յուրաքանչյուր նոր և վերադարձող անդամի իրավիճակը, ծրագրելով յուրաքանչյուր անձի հոգևոր կարիքները հոգալու աշխատանքը և իրականացնելով այդ ծրագիրը:
- Ձեր **ծխի միսիայի ղեկավարը**, ով ծառայում է որպես ծխի խորհրդի անդամ, նույնպես կապուղի է հանդիսանում ձեր և լիաժամկետ միսիոներների միջև:
- **Լիաժամկետ միսիոներները** կարող են ուսուցանել և ամրացնել նրանց, ում անդամները կգտնեն:
- Միսիոներական աշխատանքին կցված ձեր **քահանայապետը** պետք է ուսուցանի և աջակցի ծխի միսիաների ղեկավարներին ամբողջ ցցում, այդ թվում՝ ծխի միսիայի ծրագիրը կազմելիս:
- Ձեր **ծխի անդամները**, այդ թվում՝ երիտասարդները և երեխաները, ունեն ոչ-անդամ կամ քիչ ակտիվ ընկերներ, հարևաններ և ընտանիքի անդամներ: Նրանք կարող են մեծ օգնություն լինել՝ մարդկանց գտնելու և իրավիքելու գործում, որ զան և տեսնեն, թե ինչ է առաջարկում Հիսուս Քրիստոսի ավետարանը:

ՈՒՆԵՆԱԼ ՄՏԱՊՍԿԵՐ

«Կցանկանալի առջարկել, որ Եկեղեցում յուրաքանչյուր եպիսկոպոս մարդկանց փոխանցեր այս կարգախոսը. «Եկեք բոլորս աշխատենք, որ ծուխն աճի»»:

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Եպիսկոպոսը և նրա ծխի խորհուրդը քննարկում են յուրաքանչյուր հետաքրքրվողի առաջընթացը: Նրանք որոշում են, թե ինչ կարող են անել յուրաքանչյուր անձի և նրանց ընտանիքների համար, որպեսզի նրանք ընկերներ ձեռք բերեն մկրտությունից առաջ, ընդգրկվեն միջոցառումների մեջ և որպեսզի սնուցվեն նրանք, ովքեր մկրտվել են»:

Նախագահ Հենրի Բ. Այրինգ

«Եպիսկոպոսները . . . պարտականություն և պատասխանատվություն ունեն օգնելու անդամներին գտնել սրտով մաքուրներին և պատրաստել նրանց մկրտության և կյանքի ծառայության համար իրենց ծիսելու և ցցելու»:

Երեց Մ. Ռասսել Բալլարդ

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՁՆՈՒՄՈՒՆԻ ՄՐԵՆԻ
ԵԿԵՂԵՑԻ